

**Ֆինանսական հաշվետվություններ և  
Անկախ աուդիտորի եզրակացություն**

**«Արմենիան Քարդ» փակ բաժնետիրական  
ընկերություն**

31 դեկտեմբերի 2019թ.



# Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	9
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	10
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	12
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	16

# Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ  
ՀՀ, ք. Երևան 0012  
Վաղարշյան 8/1  
Հ. + 374 10 260 964  
Ֆ. + 374 10 260 961

Grant Thornton CJSC  
8/1 Vagharshyan Str.  
0012 Yerevan, Armenia  
T + 374 10 260 964  
F + 374 10 260 961

«Արմենիան Քարդ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերին

## Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Արմենիան Քարդ» փակ բաժնետիրական ընկերության (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՄ-ներ):

## Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՄ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի» (ՀԷՄՄ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

## Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՄ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների

պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Ընկերության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

### *Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար*

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով գերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՄ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի

կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա ռեպրերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու ղեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և Ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան  
Տնօրեն



Լիդա Թադեոսյան  
Աուդիտի ղեկավար



03 փետրվարի, 2020թ.



# Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2019թ.	31 դեկտեմբերի 2018թ.
<i>Ակտիվներ</i>			
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>			
Հիմնական միջոցներ	5	1,232,607	839,283
Ոչ նյութական ակտիվներ	6	519,630	537,634
Ներդրումային արժեթղթեր	7	219,577	139,901
Տրված կանխավճարներ		7,530	7,530
		<u>1,979,344</u>	<u>1,524,348</u>
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Պաշարներ	9	5,808	7,977
Հետաձգված ծախսեր	10	65,511	57,861
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	11	310,835	172,184
Մնացորդներ բանկերում	12	333,955	335,964
		<u>716,109</u>	<u>573,986</u>
Ընդամենը ակտիվներ		<u><u>2,695,453</u></u>	<u><u>2,098,334</u></u>

# Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (շարունակություն)


Հազար դրամ	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2019թ.	31 դեկտեմբերի 2018թ.
<i>Սեփական կապիտալ և պարտավորություններ</i>			
<i>Կապիտալ և պահուստներ</i>			
Բաժնետիրական կապիտալ	13.1	971,448	971,448
Պահուստային կապիտալ	13.3	376,968	376,968
Իրական արժեքի պահուստ	13.4	165,439	97,663
Կուտակված շահույթ		677,856	526,753
		<u>2,191,711</u>	<u>1,972,832</u>
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>			
Վարձակալության գծով պարտավորություն	14	257,043	-
Ակտիվներին վերաբերող շնորհներ	15	9,858	10,414
Հետաձգված հարկային պարտավորություններ	8	26,813	18,134
		<u>293,714</u>	<u>28,548</u>
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	16	122,222	96,954
Վարձակալության գծով պարտավորություն	14	61,579	-
Ընթացիկ հարկային պարտավորություններ		26,227	-
		<u>210,028</u>	<u>96,954</u>
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		<u>2,695,453</u>	<u>2,098,334</u>

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2020թ. փետրվարի 3-ին:

Իշխան Մխիթարյան  
Գործադիր տնօրեն




Հայկ Ծամկոչյան  
Գլխավոր հաշվապահ



Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը ունի մտքի է ընթացիկ պատճենները հաշվետվությունները հաստատվելու և հաշվետվությունները հաստատվելու 12-ից մինչև 48-րդ Էջերում մտքի է պատճենները հաշվետվությունները հաստատվելու:





# Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2019	2018
Հասույթ	17	1,835,712	1,569,509
Վաճառքի ինքնարժեք	18	(1,459,749)	(1,298,489)
Համախառն շահույթ		375,963	271,020
Այլ եկամուտ		10,212	10,143
Իրացման ծախսեր		(2,859)	(2,823)
Վարչական ծախսեր	19	(159,191)	(177,773)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարումից վնաս		(2,080)	(9,154)
Այլ ծախսեր		(6,256)	(6,204)
Գործառնական գործունեությունից շահույթ		215,789	85,209
Ֆինանսական եկամուտ	20	20,643	18,950
Ֆինանսական ծախսեր	20	(38,738)	-
Արտարժույթային գործառնություններից զուտ վնաս		(406)	(376)
Շահույթ մինչև հարկերը		197,288	103,783
Շահութահարկի գծով ծախս	21	(46,185)	(28,632)
Տարվա շահույթ		151,103	75,151
<i>Այլ համապարփակ ֆինանսական արդյունք</i>			
<i>Հողվածներ, որոնք հետագայում կվերադասակարգվեն շահույթին կամ վնասին</i>			
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող բաժնային գործիքների վերագնահատումից օգուտ		79,676	27,573
Վերադասակարգման ենթակա հողվածների վերաբերող շահութահարկ		(14,342)	(5,515)
Հարկային դրույքաչափի նվազում (ծանոթ. 21)		2,442	-
		67,776	22,058
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		218,879	97,209

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 48-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Բաժնե- տիրական կապիտալ	Պահու- տային կապիտալ	Իրական արժեքի պահուստ	Կուտակ- ված շահույթ	Ընդամենը
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	971,448	376,968	75,605	451,602	1,875,623
Տարվա շահույթ	-	-	-	75,151	75,151
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք					
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող բաժնային գործիքների իրական արժեքի զուտ փոփոխություն	-	-	27,573	-	27,573
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	(5,515)	-	(5,515)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	22,058	75,151	97,209
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	971,448	376,968	97,663	526,753	1,972,832
Տարվա շահույթ	-	-	-	151,103	151,103
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք					
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող բաժնային գործիքների իրական արժեքի զուտ փոփոխություն	-	-	79,676	-	79,676
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	(14,342)	-	(14,342)
Հարկային դրույքաչափի նվազում (ծանոթ. 21)	-	-	2,442	-	2,442
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	67,776	151,103	218,879
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	971,448	376,968	165,439	677,856	2,191,711

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 48-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:



# Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ

	2019	2018
<i>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Տարվա շահույթ	151,103	75,151
<i>Ճշգրտումներ՝</i>		
Մաշվածություն և ամորտիզացիա	380,546	272,674
Հիմնական միջոցների օտարումից զուտ վնաս	2,080	9,154
Շահութահարկի գծով ծախս	46,185	28,632
Ծնորհներից եկամուտ	(556)	(559)
Զուտ ֆինանսական ծախսեր (եկամուտներ)	18,095	(18,950)
Փոխարժեքային տարբերությունից վնաս	406	376
<i>Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները</i>	597,859	366,478
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	4,071	(70,095)
Պաշարների փոփոխություն	2,169	105
Հետաձգված ծախսերի փոփոխություն	(7,650)	(8,843)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	9,714	(25,367)
<i>Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ</i>	606,163	262,278
Վճարված շահութահարկ	(23,179)	(28,972)
<i>Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ</i>	582,984	233,306



## Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ

	2019	2018
<i>Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(513,797)	(202,142)
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր	2,415	4,597
Տոկոսային եկամուտ ֆինանսական կազմակերպությունների հետ ռեպո գործարքներից	10,906	11,517
Ստացված շահաբաժիններ	9,737	7,433
<i>Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ</i>	<u>(490,739)</u>	<u>(178,595)</u>
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից		
Վարձակալության գծով պարտավորությունների վճարներ	(93,848)	-
Ֆինանսական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	<u>(93,848)</u>	<u>-</u>
Բանկերում մնացորդների զուտ աճ/(նվազում)	(1,603)	54,711
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(406)	(376)
Բանկերում մնացորդներ տարվա սկզբում	335,964	281,629
Բանկերում մնացորդներ տարվա վերջում (ծանոթ. 12)	<u>333,955</u>	<u>335,964</u>

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 48-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:



# Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

## 1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Արմենիան Քարդ» ՓԲԸ-ն (Ընկերություն) հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և տասը առևտրային բանկերի կողմից՝ 2000թ-ի մարտին՝ Հայաստանի Հանրապետության բանկային ոլորտում նոր վճարահաշվարկային համակարգի ներդրման և զարգացման նպատակով:

1990-ական թվականներին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը համակարգի ստեղծման ծրագիր է ներկայացրել ԱՄՆ-ի Միջազգային Զարգացման Գործակալությանը: Նախագիծը հաստատվել է ԱՄՆ-ի Միջազգային Զարգացման Գործակալության կողմից և 1999թ-ին ԱՄՆ-ի Կառավարության և ՀՀ կենտրոնական բանկի միջև ստորագրվել է «Հուշագիր մտադրությունների մասին»:

Ընկերության ստեղծման նպատակն է Հայաստանի Հանրապետությունում պլաստիկ քարտերով հաշվարկների միասնական համակարգի ստեղծումը, որը պետք է ապահովի ապրանքների և մատուցվող ծառայությունների դիմաց անկանխիկ վճարումների իրականացումը պլաստիկ քարտերով:

Ընկերությունը մատուցում է ծառայությունների փաթեթ, որը հնարավորություն է տալիս առևտրային բանկերին թողարկել և սպասարկել ArCa Classic, ArCa Gold, ArCa Business, ArCa Affinity, ArCa Co-branded, ArCa Debit, ArCa Platinum քարտեր՝ օգտվելով պրոցեսինգային կենտրոնի ժամանակակից տեխնիկական, տեխնոլոգիական և ծրագրային հնարավորություններից, ինչպես նաև Ընկերության մասնագիտական օժանդակությունից:

Ընկերությունն իր գործունեության ընթացքում իրականացնում է՝

- պլաստիկ քարտերով վճարումների միասնական համակարգի (հետագայում՝ «Համակարգ») ստեղծում և ընդհանուր ղեկավարում,
- համակարգի շրջանակներում թողարկված քարտերով կատարված գործառնությունների (գործարքների) պրոցեսինգ,
- միջազգային վճարային համակարգերի քարտերի սպասարկում (մարշրուտիզացիա և/կամ մշակում տեղում) և թողարկում,
- միջազգային և տեղական վճարային համակարգերի քարտերով կատարված գործարքների տվյալների համապատասխան մշակում (մարշրուտիզացիա կամ մշակում տեղում),
- ATM-երից (բանկոմատներ) և POS-երից (քարտերի սպասարկման կետեր) տվյալների հավաքագրում և դրանց մշակում,
- ATM-երի և POS-երի տեղադրում, տեխնիկական սպասարկում,
- քարտերի պերսոնալիզացիա (էլեկտրոնային, գրաֆիկական, մեխանիկական), և այլն:

Ընկերությունը հանդիսանում է MasterCard միջազգային վճարային, Visa, American Express և Diners Club International համակարգերի պրոցեսինգային ծառայությունների մատուցող կենտրոն, ինչպես նաև հանդիսանում է MasterCard միջազգային վճարային համակարգի լիիրավ անդամ:

Ընկերության բաժնետերերն են հանդիսանում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված առևտրային բանկեր (տե՛ս ծանոթ. 13):



Ընկերության իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Գարեգին Նժդեհի փող. 32/1:  
Ընկերության գործունեության հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Մ.Խորենացու 15, Էլիտ Պլազա բիզնես-կենտրոն:

2019թ. Ընկերության աշխատողների տարեկան միջին թիվը կազմել է 80 (2018թ.՝ 80):

## 2 Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում: Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից: Կառավարությունը հաստատել է արդյունավետ կառավարման իր հանձնառությունը, որը ենթադրում է հակակոռուպցիոն ջանքեր, թափանցիկություն և հաշվետվողականություն: Շարունակելով 2018 թ. գրանցված աճի համոզիչ տեմպը՝ 2019թ. տարեկան տնտեսական աճը մնացել է կայուն: Տնտեսության մեջ առանցքային դեր են ունեցել առևտրի, ծառայությունների և արդյունաբերության ոլորտները:

Հայաստանի տնտեսության ապագա կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս բարիփոխումներից, ինչպես նաև Եվրասիական Տնտեսական Միությունում զարգացումներից, որի հետ շարունակվում է ՀՀ տնտեսության ինտեգրումը:

Ընկերության ղեկավարությունը կարծում է, որ ընթացիկ պայմաններում իրականացվում են համապատասխան միջոցառումներ Ընկերության տնտեսական կայունությունն ապահովելու նպատակով:

## 3 Պատրաստման հիմքերը

### 3.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից: Հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով այն գնահատման վրա, որ Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է անընդհատության սկզբունքից ելնելով:

2019թ. Ընկերությունը սկսել է կիրառել վարձակալության ճանաչման նոր ուղեցույցը (տե՛ս ծանոթագրություն 3.5):

### 3.2 Չափման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք հաշվառվում են իրական արժեքներով:

### 3.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Ընկերության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

### 3.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Ընկերության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 22-ում:

### 3.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ընթացիկ տարում Ընկերությունն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2019թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) և ՀՀՄՄԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նշված փոփոխությունների բնույթը և ազդեցությունը բացահայտված են ստորև:

#### **Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են 2019թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար**

ՖՀՄՍ 9 (Փոփոխություններ) *«Ֆինանսական գործիքներ. կանխավճարների առանձնահատկությունները՝ բացասական փոխհատուցմամբ»*

ՖՀՄՍ 9-ի համաձայն պարտքային գործիքը կարող է չափվել ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքում, պայմանով, որ պայմանագրային դրամական հոսքերը հանդիսանում են «միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ» (SPPI չափանիշ) և գործիքը պահվում է այդ դասակարգմանը համապատասխանող բիզնես մոդելի շրջանակներում: ՖՀՄՍ 9-ի փոփոխությունները պարզաբանում են, որ ֆինանսական ակտիվը բավարարում է SPPI չափանիշին՝ անկախ որևէ իրադարձությունից կամ հանգամանքից, որը պատճառ է հանդիսանում պայմանագրի վաղաժամ դադարեցման համար և անկախ նրանից, թե պայմանագրի վաղաժամ դադարեցման պատճառով որ կողմն է վճարում կամ ստանում համապատասխան փոխհատուցում:

Այս փոփոխությունների ազդեցությունը Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա էական չէ:

#### **ՖՀՄՍ 16 «Վարձակալություններ»**

ՖՀՄՍ 16-ը «Վարձակալություններ» փոխարինում է ՀՀՄՍ 17-ը «Վարձակալություն», առկա երեք մեկնաբանությունների հետ մեկտեղ (ՖՀՄՄՄԿ Մեկնաբանություն 4 «Համաձայնություններում վարձակալության առկայության որոշում», ՄՄԿ 15 «Գործառնական վարձակալություն. խրախուսող պայմաններ» և ՄՄԿ 27 «Վարձակալության իրավական ձև ներառող գործարքների բովանդակության գնահատումը»):

Այս նոր ստանդարտի կիրառումը հանգեցրել է նրան, որ Ընկերությունն իր բոլոր նախկին գործառնական վարձակալությունների համար ճանաչել է օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն, բացառությամբ այն վարձակալությունների, որոնք որոշակիացված են որպես ստանդարտի սկզբնական կիրառման պահին 12 ամսից կարճ վարձակալական ժամկետ ունեցող վարձակալություն:

Նոր ստանդարտը կիրառվել է՝ օգտագործելով ձևափոխված հետընթաց մոտեցումը՝ ՖՀՄՍ 16-ի կիրառման միասնական ազդեցությունը ճանաչելով սեփական կապիտալում որպես կուտակված արդյունքի սկզբնական մնացորդի ճշգրտում ընթացիկ ժամանակաշրջանում: Նախորդ ժամանակաշրջանները չեն վերաներկայացվել:

Ստանդարտի սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ առկա պայմանագրերի համար Ընկերությունն ընտրել է ՀՀՄՍ 17-ի և ՖՀՄՍԿ Մեկնաբանություն 4-ի համաձայն վարձակալության սահմանման օգտագործումը և չի կիրառել ՖՀՄՍ 16-ը նախկինում ՀՀՄՍ 17-ի և ՖՀՄՍԿ Մեկնաբանություն 4-ի համաձայն վարձակալություն չճանաչված համաձայնությունների նկատմամբ:

ՖՀՄՍ 16-ի սկզբնական կիրառման ամսաթվի՝ այն է 2019թ. հունվարի 1-ի դրությամբ առկա գործառնական վարձակալությունների համար Ընկերությունն ընտրել է սկզբնավորման ուղղակի ծախսումները չներառել օգտագործման իրավունքի ձևով ակտիվի չափման մեջ: Այդ ամսաթվին Ընկերությունը նաև ընտրել է օգտագործման իրավունքի ձևով ակտիվները չափել անցման օրվա դրությամբ առկա վարձակալական պարտավորությանը հավասար գումարով՝ ճշգրտված բոլոր կանխավճարների կամ հաշվեգրված վարձակալական վճարների չափով:

Սկզբնական կիրառման ամսաթվին օգտագործման իրավունքի ձևով ակտիվների արժեզրկման ստուգում կատարելու փոխարեն, Ընկերությունը հիմնվել է պատմական գնահատման վրա՝ արդյոք վարձակալություններն անբարենպաստ են, թե ոչ, անմիջապես նախքան ՖՀՄՍ 16-ի սկզբնական կիրառման ամսաթիվը:

Այն վարձակալությունների համար, որոնք նախկինում հաշվառվել են որպես գործառնական վարձակալություններ և որոնք մնացորդային ժամկետը 12 ամսից պակաս է, նաև փոքրարժեք վարձակալությունների համար, անցման ժամանակ Ընկերությունը կիրառել է օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ չճանաչելու, այլ վարձակալական ծախսը վարձակալության մնացորդային ժամկետի ընթացքում գծային հիմունքով հաշվառելու այլընտրանքը:

Այն վարձակալությունների համար, որոնք նախկինում հաշվառվել են որպես ֆինանսական վարձակալություններ, օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալական պարտավորությունը սկզբնական կիրառման ամսաթվին չափվում են այն գումարով, որով չափվել են անմիջապես նախքան սկզբնական կիրառման ամսաթիվը՝ ՀՀՄՍ 17-ի կիրառմամբ:

ՖՀՄՍ 16-ին անցնելիս վարձակալության գծով պարտավորության նկատմամբ կիրառված լրացուցիչ փոխառության միջին կշռված դրույքը կազմում է 11.1%:

Վարձակալությունը երկարաձգելու կամ դադարեցնելու այլընտրանքները դիտարկելիս Ընկերությունն օգտվել է հետադարձ ամսաթվով դատողություններ կիրառելու հնարավորությունից՝ վարձակալության ժամկետը որոշելու համար:

Հետևյալ աղյուսակում արտացոլված է ՀՀՄՍ 17-ի և ՖՀՄՍ 16-ի համաձայն ներկայացված ֆինանսական հաշվետվությունների տողերի համադրումը 2019թ. հունվարի 1-ի դրությամբ.

**Հազար դրամ**

	<b>Հաշվեկշռային արժեքը ՀՀՄՍ 17-ի համաձայն 31.12.2018</b>	<b>Վերադա- սակարգում</b>	<b>Վերա- չափում</b>	<b>Հաշվեկշռային արժեքը ՖՀՄՍ 16-ի համաձայն 01.01.2019</b>
Օգտագործման իրավունքի ձևով	-	-	373,732	373,732

ակտիվներ – Գրասենյակային տարածքներ			
Վարձակալության գծով պարտավորություն	-	373,732	373,732

Հետևյալ աղյուսակում արտացոլված է 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գործառնական վարձակալության գծով պայմանական պարտավորությունների (ինչպես բացահայտված է 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական հաշվետվություններում) համադրումը 2019թ. հունվարի 1-ի դրությամբ ճանաչված վարձակալության գծով պարտավորությունների հետ.

Հազար դրամ		21,600
<b>2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բացահայտված վարձակալության գծով պարտավորություններ</b>		
Ճանաչումից ազատումներ.		
• 12 ամսից պակաս մնացորդային ժամկետ ունեցող վարձակալություններ		(3,150)
Վարձակալության երկարաժամանակյալ խելամիտ համոզմունք		477,701
Գործառնական վարձակալության գծով պարտավորությունները մինչև զեղչումը		496,151
Զեղչումը՝ օգտագործելով լրացուցիչ փոխառության միջին կշռված դրույքը		(122,419)
<b>2019թ. հունվարի 1-ի դրությամբ բացահայտված վարձակալության գծով պարտավորություններ՝ ճանաչված ՖՀՄՍ 16-ի համաձայն</b>		<b>373,732</b>

**ՖՀՄՍԿ Մեկնաբանություն 23 «Շահութահարկով հարկման մոտեցումների վերաբերյալ անորոշություն»**

ՖՀՄՍԿ Մեկնաբանություն 23-ը տրամադրում է ուղեցույց այն բանի վերաբերյալ, թե ինչպես արտացոլել ՀՀՄՍ 12-ի համաձայն հարկերի հաշվառման մեջ անորոշությունների ազդեցությունը, մասնավորապես. (ա) արդյոք անորոշ հարկային մոտեցումները պետք է դիտարկվեն առանձին, (բ) ենթադրություններ հարկային մարմինների ստուգումների վերաբերյալ, (գ) հարկվող շահույթի (հարկային վնասի), հարկման բազաների, չօգտագործված հարկային վնասների, չօգտագործված հարկային կրեդիտների, ինչպես նաև հարկի դրույքաչափերի որոշում, և (դ) փաստերի և հանգամանքների փոփոխությունների ազդեցությունը:

Ընկերությունն ընտրել է ՖՀՄՍԿ Մեկնաբանություն 23-ի հետընթաց կիրառման մոտեցումը՝ կուտակային ազդեցությունը հաշվառելով կուտակված արդյունքում սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ՝ 2019թ. հունվարի 1: Շահութահարկի գծով պարտավորության աճի ազդեցությունը Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա էական չի եղել:

**Տարեկան բարեփոխումներ՝ 2015-2017թթ.**

2015-2017թթ. տարեկան բարեփոխումները մի շարք ՖՀՄՍ-ներում կատարել են որոշ աննշան փոփոխություններ: Ընկերությանը վերաբերող փոփոխություններն ամփոփված են ստորև.

**ՀՀՄՍ 12 «Շահութահարկ. որպես սեփական կապիտալի տարր դասակարգված գործիքների վճարման հետ կապված հարկային հետևանքները»**

ՀՀՄՍ 12-ի փոփոխությունները պարզաբանում են, որ դիվիդենտների հետ կապված հարկային հետևանքները ճանաչվում են շահույթում կամ վնասում, համապարփակ արդյունքում կամ սեփական կապիտալում՝ ելնելով նրանից, թե ընկերությունը որտեղ է սկզբնապես ճանաչել այդ գործարքները կամ իրադարձությունները:

## ՀՀՄՍ 23 «Փոխառության ծախսումներ. կապիտալացման ենթակա փոխառության ծախսումներ»

ՀՀՄՍ 23-ի 14-րդ հոդվածը հստակեցնում է, թե ինչպես որոշել փոխառության ծախսերի այն գումարը, որը ենթակա է կապիտալացման, երբ ընկերությունը ստանում է ընդհանուր նպատակների համար փոխառու միջոցներ և օգտագործում է դրանք որակավորվող ակտիվ ձեռք բերելու համար:

ՀՀՄՍ 23-ը պահանջում է, որ ընդհանուր նպատակների համար ստացված փոխառու միջոցները որոշելիս ընկերությունը բացառի «փոխառությունները, որոնք ստացվել են հարուկ որակավորվող ակտիվ ձեռք բերելու համար»: ՀՀՄՍ-ն դիտարկել է, որ ընկերությունները կարող են սխալ մեկնաբանել այս բառերը՝ ենթադրելով, որ ընդհանուր նպատակով ստացված փոխառու միջոցներից անհրաժեշտ է բացառել այն փոխառու միջոցների մնացորդները, որոնք սկզբնապես ստացվել էին հատուկ որակավորվող ակտիվ ձեռք բերելու համար, որն այժմ պատրաստ է նպատակային օգտագործման կամ վաճառքի համար:

Այսպիսով, փոփոխությունները պարզաբանում են, որ երբ որակավորվող ակտիվը պատրաստ է իր նպատակային օգտագործման կամ վաճառքի համար, ընկերությունը պետք է դիտարկի սկզբնապես հատուկ որակավորվող ակտիվ ձեռք բերելու համար ստացված փոխառության մնացորդը որպես ընդհանուր նպատակով ստացված փոխառություն:

Փոփոխությունները ենթակա են կիրառման առաջընթաց (այսինքն՝ միայն այն փոխառության ծախսումների համար, որոնք առաջացել են այս փոփոխություններն առաջին անգամ կիրառելու հաշվետու ժամանակաշրջանի սկզբին կամ դրանից հետո) քանի որ փոխառության ծախսումները հետընթաց կապիտալացնելու համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման հետ կապված ծախսերը կարող են էապես գերազանցել ակնկալվող օգուտները:

### **Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից**

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԻ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունում սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից: Ընթացիկ տարում չկիրառված նոր ստանդարտները, փոփոխությունները և մեկնաբանությունները չեն բացահայտվել, քանի որ չի ակնկալվում, որ դրանք էական ազդեցություն կունենան Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա: Որոշ այլ նոր ստանդարտներ և մեկնաբանություններ թողարկվել են, սակայն չի ակնկալվում, որ դրանք Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա էական ազդեցություն կունենան:

## 4 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

### 4.1 Արտարժույթ

## Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (<< ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ << ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը:

	2019թ. դեկտեմբերի 31	2018թ. դեկտեմբերի 31
<< դրամ/1 ԱՄՆ դոլար	479.70	483.75
<< դրամ/1 Եվրո	537.26	553.65

Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում և չափվում են պատմական արժեքով (հաշվարկվում են՝ օգտագործելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը), բացառությամբ իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածների, որոնք վերահաշվարկվում են իրական արժեքի չափման օրվա դրությամբ գործող փոխարժեքով:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում: Իրական արժեքով արտահայտված ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ներառվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում, բացառությամբ այն ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած տարբերությունների, որոնց վերաբերող շահույթը կամ վնասը ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում: Նման ոչ դրամային հոդվածների դեպքում շահույթի կամ վնասի ցանկացած փոխարժեքային բաղադրիչ նույնպես ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում:

## 4.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցիչ փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցիչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ

ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:  
Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր և շինություններ	- 40 տարի
Համակարգչային տեխնիկա	- 5 տարի
Սերվերներ	- 7 տարի
Մեքենաներ, սարքավորումներ	- 8 տարի
Կապիտալ ներդրումներ վարձակալված հիմնական միջոցներում	- 4-8 տարի
Տրանսպորտային միջոցներ	- 10 տարի
Գրասենյակային գույք	- 8 տարի
Այլ հիմնական միջոցներ	- 8 տարի:

Քանի որ հողի համար հնարավոր չէ որոշել վերջավոր օգտակար ծառայության ժամկետ, համապատասխան հաշվեկշռային արժեքը չի ամորտիզացվում:

### 4.3 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է 15 տարի համակարգչային ծրագրերի համար և 10 տարի՝ մնացած բոլոր ոչ նյութական ակտիվների համար:

### 4.4 Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվներն արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորուստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում

արժեգրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

#### 4.5 Վարձակալված ակտիվներ

Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 3.5-ում, Ընկերությունը կիրառել է ՖՀՄՍ 16-ը՝ օգտագործելով ձևափոխված հետընթաց մոտեցումը, այդպիսով համադրելի տեղեկատվությունը չի վերաներկայացվել: Դա նշանակում է, որ համադրելի տեղեկատվությունը դեռևս ներկայացված է ՀՀՄՍ 17-ի և ՖՀՄՄԿ Մեկնաբանություն 4-ի համաձայն:

#### *2019թ. հունվարի 1-ից սկսած կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականություն*

##### *Ընկերությունը որպես վարձակալ*

2019թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո կնքված ցանկացած նոր պայմանագրի դեպքում Ընկերությունը դիտարկում է, թե արդյոք պայմանագիրը վարձակալական է, կամ պարունակում է վարձակալություն: Վարձակալությունը սահմանվում է որպես «պայմանագիր կամ պայմանագրի մի մաս, որը փոխհատուցման դիմաց փոխանցում է ակտիվի (հիմքում ընկած ակտիվ) օգտագործման իրավունքը որոշակի ժամանակահատվածի համար»: Այս սահմանումը կիրառելու համար Ընկերությունը գնահատում է, թե արդյոք պայմանագիրը բավարարում է հետևյալ երեք հիմնական գնահատականներին.

- պայմանագիրը պարունակում է որոշակիացված ակտիվ, որը կա՛մ հստակ սահմանված է պայմանագրում, կա՛մ սահմանվում է անուղղակի վկայության հիման վրա՝ որոշակիացվելով այն պահին, երբ ակտիվը դառնում է հասանելի Ընկերությանը,
- Ընկերությունն իրավունք ունի ստանալու որոշակիացված ակտիվի օգտագործումից, ըստ էության, բոլոր տնտեսական օգուտները օգտագործման ողջ ժամանակահատվածում՝ հաշվի առնելով նրա՝ պայմանագրի որոշակի շրջանակում իրավունքները,
- Ընկերությունն իրավունք ունի օգտագործման ժամանակահատվածի ընթացքում ուղղորդելու որոշակիացված ակտիվի օգտագործումը: Ընկերությունն իրավունք ունի ուղղորդել, թե «ինչպես և ինչ նպատակով» ակտիվն օգտագործել օգտագործման ժամանակաշրջանի ընթացքում:

##### *Վարձակալության ճանաչումը և չափումը որպես վարձակալ*

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, Ընկերությունը պետք է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը չափվում է սկզբնական արժեքով, որը ձևավորվում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափումից, Ընկերության կատարած ցանկացած սկզբնական ուղղակի ծախսերից, վարձակալության ժամկետի ավարտին ակտիվի ապատեղակայման և քանդման ցանկացած ծախսի գնահատումից և նախքան վարձակալության մեկնարկի ամսաթիվը կատարված ցանկացած վարձակալական վճարներից (հանած ստացված ցանկացած խրախուսումները):

Ընկերությունը հաշվարկում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը գծային հիմունքով վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև օգտագործման իրավունքի ձևով ակտիվի օգտակար ծառայության ավարտի ամսաթվից կամ վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը: Ընկերությունը նաև գնահատում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը արժեգրկման համար, երբ այդպիսի ցուցանիշներ կան:

Մեկնարկի ամսաթվին Ընկերությունը չափում է վարձակալության գծով պարտավորությունը այդ ամսաթվին դեռևս չվճարված վարձավճարների ներկա արժեքով՝ դրանք զեղչելով՝ կիրառելով



վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել, կամ Ընկերության լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ ներառվող վարձավճարները պարունակում են հաստատուն վճարումներ (ներառյալ՝ ըստ էության հաստատուն վճարումներ), վարձակալության փոփոխուն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, գումարներ, որոնք, ինչպես սպասվում է կվճարվեն մնացորդային արժեքի երաշխիքի ներքո և վճարումներից, որոնք առաջանում են օպցիոններից, որոնց իրագործման վերաբերյալ կա խելամիտ համոզմունք:

Սկզբնական չափումից հետո պարտավորությունը կնվազեցվի կատարված վճարումների և կմեծացվի տոկոսների չափով: Այն վերաչափվում է՝ արտացոլելու ցանկացած վերագնահատում կամ փոփոխություն, կամ եթե առկա են փոփոխություններ ըստ էության հաստատուն վճարումներում:

Երբ վարձակալության գծով պարտավորությունը վերաչափվում է, համապատասխան ճշգրտումը արտացոլվում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվում կամ շահույթում և վնասում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվը նվազեցվել է գրոյի:

Ընկերությունը կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների հաշվառման համար ընտրել է գործնական մոտեցումներ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն ճանաչելու փոխարեն, դրանց հետ կապված վճարումները վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում են շահույթում կամ վնասում որպես ծախս՝ գծային հիմունքով:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ընդգրկվել են հիմնական միջոցների տողում, իսկ վարձակալության գծով պարտավորությունները՝ առևտրային և այլ պարտավորություններում:

#### *Մինչև 2019թ. հունվարի 1-ը կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականություն*

##### *Գործառնական վարձակալություն*

Գործառնական վարձակալության գծով վճարները ճանաչվում են որպես ծախս գծային հիմունքով: Վարձակալության հետ կապված ծախսերը, ինչպիսիք են պահպանման և ապահովագրության ծախսերը, ծախսագրվում են իրականացման պահին:

## 4.6 Պաշարներ

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով առաջին մուտք՝ առաջին ելք (ԱՄԱԵ) մեթոդը, և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

## 4.7 Ֆինանսական գործիքներ

### *Ճանաչում, սկզբնական չափում և ապաճանաչում*

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

### *Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը*

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՍ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- Ամորտիզացված արժեքով հաշվառվող
- իրական արժեքով չափվող՝ այլ համապարփակ արդյունքում:

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Ընկերության՝ ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը
- Ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները

Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ վերագրվում են տարբեր կատեգորիաների՝ կախված գործիքի բնույթից և նպատակից: Ֆինանսական գործիքի կատեգորիան համապատասխանեցվում է այն սկզբունքին, որով չափվում է տվյալ գործիքը և այն հանգամանքին, թե արդյոք առաջացող եկամուտը և ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, թե այլ համապարփակ ֆինանսական արդյունքում: Ընկերության ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 24-ում:

Ընդհանուր առմամբ, Ընկերության բոլոր ֆինանսական ակտիվները ճանաչվում են՝ օգտագործելով վերջնահաշվարկի ամսաթվի հաշվառումը: Ֆինանսական ակտիվների հետ կապված բոլոր ծախսերը և եկամուտները որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, ներկայացվում են «Ֆինանսական ծախս», «Ֆինանսական եկամուտ» հոդվածներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որը ներկայացվում է «Այլ ծախսեր» հոդվածում:

### *Ֆինանսական ակտիվների հեղափոխ չափումը*

#### *Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ*

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին (և չեն դասակարգված որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով).

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմանները առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն դեպքերում, երբ զեղչման ազդեցությունը աննշան է, զեղչում չի կատարվում: Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Ընկերության դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային դեբիտորական պարտքերը և այլ դեբիտորական պարտքերի մեծամասնությունը:

### *Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով հաշվառվող բաժնային գործիքներ*

Բաժնային գործիքներում կատարվող ներդրումների սկզբնական ճանաչման ժամանակ Ընկերությունը կարող է անշրջելիորեն որոշել ներկայացնել իրական արժեքի հետագա փոփոխություններն այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում:

### *Ֆինանսական ակտիվների արժեզրկում*

Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչելու համար ՖՀՄՍ 9-ում արժեզրկմանը ներկայացված պահանջներում օգտագործվում է ապագային առնչվող տեղեկատվություն՝ «Ակնկալվող պարտքային կորուստների մոդելը»: ՖՀՄՍ 9-ի պահանջների շրջանակներում ընդգրկվող գործիքները ներառում են տրված վարկերը և փոխառային տիպի այլ ֆինանսական ակտիվները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով և իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքում, առևտրային դեբիտորական պարտքերը, պայմանագրային ակտիվները որոնք ճանաչվել և չափվել են ՖՀՄՍ 15-ի համաձայն և վարկային պարտավորությունները և որոշ ֆինանսական երաշխավորության պայմանագրերը (թողարկողի համար), որոնք չեն չափվում իրական արժեքով՝ շահույթում կամ վնասում:

Պարտքային կորուստների ճանաչումը այլևս կախված չէ Ընկերության՝ պարտքային կորուստը բնորոշող իրադարձության սկզբնական բացահայտումից: Փոխարենը, պարտքային ռիսկը գնահատելիս և ակնկալվող պարտքային կորուստները չափելիս Ընկերությունը դիտարկում է տեղեկատվության ավելի ընդլայնված զանգված՝ ներառյալ անցյալ իրադարձությունները, ընթացիկ պայմանները, խելամիտ և հիմնավորված կանխատեսումները, որոնք ազդեցություն ունեն գործիքի ապագա դրամական հոսքերի ակնկալվող հավաքագրելիության վրա:

Առաջընթաց գնահատման մոտեցումը կիրառելիս առանձնացվում են հետևյալները.

- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն չեն վատթարացել կամ ունեն ցածր պարտքային ռիսկ («Փուլ 1») և
- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն վատթարացել են և որոնց պարտքային ռիսկը ցածր չէ («Փուլ 2»):

«Փուլ 3»-ը ընդգրկում է այն ֆինանսական ակտիվները, որոնց մասով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա են արժեզրկման օբյեկտիվ ապացույցներ:

Առաջին դասի ակտիվների համար ճանաչվում են «12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները», մինչդեռ «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները» ճանաչվում են երկրորդ դասի ակտիվների համար:

Ակնկալվող պարտքային կորուստների չափումը որոշվում է ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամկետի պարտքային կորուստների հավանականության միջին կշռված գնահատումով:

### *Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր և պայմանագրային ակտիվներ*

Ընկերությունը հաշվառում է առևտրային և այլ դեբիտորական պարտքերը և պայմանագրային ակտիվները օգտվելով պարզեցված մոտեցումից և կորստի գծով պահուստը ձևակերպում է որպես գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ: Դրանք իրենցից ներկայացնում են պայմանագրային դրամական հոսքերի

ակնկալվող դադարեցումները՝ հաշվի առնելով ֆինանսական ակտիվի գործողության ժամկետի ամբողջ ընթացքում ցանկացած պահի չմարվելու հնարավորությունը: Ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկելիս Ընկերությունն օգտագործում է պահուստի մատրիցան՝ ելնելով պատմական փորձից, արտաքին ցուցանիշներից և ապագային առնչվող տեղեկատվությունից Ընկերությունը գնահատում է առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկումը հավաքական հիմունքով, քանի որ դրանք ունեն պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներ, դրանք խմբավորվել են՝ ելնելով ժամկետանց օրերից:

#### *Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը*

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը: Ընկերության ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են ծանոթագրություն 23-ում:

#### *Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր*

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

### 4.8 Սեփական կապիտալ

Ընկերության կողմից թողարկվող բաժնային գործիքները հաշվառվում են անվանական արժեքով:

Բաժնետիրական կապիտալն իրենից ներկայացնում է թողարկված բաժնետոմսերի նոմինալ արժեքը:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների պահուստները ներառում են այս տիպի ֆինանսական գործիքներին առնչվող օգուտներն և վնասները:

Զբաղիված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթը:

Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

### 4.9 Շնորհներ

Շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Ընկերությունը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Շնորհները, որոնց հիմնական պայմանը Ընկերության կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցվել կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ և սիստեմատիկորեն փոխանցվում են շահույթ կամ վնաս՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Այլ շնորհները ճանաչվում են սիստեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են: Շնորհը, որը հատկացվում է Ընկերությանը՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա համապատասխան ծախսումներ կրելու, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

### 4.10 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Ընկերությունը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

#### 4.11 Հասույթի ճանաչում

Հասույթը ձևավորվում է հիմնականում վճարահաշվարկային ծառայություններից:

Որոշելու համար, թե արդյոք անհրաժեշտ է ճանաչել հասույթ, թե ոչ, Ընկերությունն առաջնորդվում է 5-քայլի գործընթացով.

- 1 Բացահայտել հաճախորդի հետ պայմանագիրը
- 2 Բացահայտել կատարման պարտականությունները
- 3 Որոշել գործարքի գինը
- 4 Բաշխել գործարքի գինը կատարման պարտականությունների միջև
- 5 Ճանաչել հասույթը, երբ կատարման պարտականություն(ները) բավարարված են

Հասույթը ճանաչվում է կամ ժամանակի մեջ որևէ պահին կամ ժամանակի ընթացքում, երբ Ընկերությունը բավարարում է կատարման իր պարտականությունը՝ հաճախորդին փոխանցելով խոստացված ապրանքը կամ ծառայությունը:

Ընկերությունը ճանաչում է դեռևս չբավարարված կատարման պարտականությունների համար ստացված հատուցման դիմաց պայմանագրային պարտավորությունները և արտացոլում է այդ գումարները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես հաճախորդներից ստացված կանխավճարներ: Նման ձևով, եթե Ընկերությունը բավարարում է կատարման պարտականությունը մինչև հատուցման ստանալը, Ընկերությունը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է կամ պայմանագրային ակտիվ, կամ դեբիտորական պարտք՝ կախված նրանից, թե արդյոք հատուցման ժամկետը լրանալուց առաջ անհրաժեշտ է միայն որոշակի ժամանակ, թե այլ լրացուցիչ պայման:

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով՝ հաշվի առնելով Ընկերության կողմից տրամադրված ցանկացած առևտրական զեղչերը և իջեցումների գումարները:

#### *Վճարահաշվարկային ծառայություններ*

Հասույթն առաջանում է վճարահաշվարկային ծառայությունների դիմաց բանկերի կողմից վճարվելիք կոմիսիոն վճարներից:

Վճարահաշվարկային ծառայությունները մասնավորապես ներառում են՝

- կանխիկի տրամադրում բանկումատներով,
- առևտրային և սպասարկման կետերում ձեռք բերված ապրանքների կամ ստացված ծառայությունների դիմաց վճարումների իրականացում POS տերմինալներով,
- կոմունալ ծառայությունների դիմաց վճարումների իրականացում բանկումատներով,
- էլեկտրոնային վճարումների իրականացում ինտերնետով,
- քարտային հաշվի մնացորդի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում,
- ինտերնետային առևտուր,
- քարտից քարտ գումարների փոխանցում և այլն:

#### *Թողարկված քարտերի էմբոսինգ և կողավորում*

Հասույթը ճանաչվում է «ԱրՔա» վճարային համակարգում բանկերի կողմից թողարկված պլաստիկ քարտերի էմբոսինգից և կողավորումից և ճանաչվում է գործարքի փաստացի իրականացման ժամանակ:

#### *Տարեկան անդամավճարներ*

Հասույթը ճանաչվում է տարեկան միանվագ անդամավճարներից, որոնք վճարում են «ԱրՔա» վճարային համակարգի անդամ բանկերը՝ մատուցված ծառայությունների, ինչպես նաև քարտեր թողարկելու և սպասարկելու դիմաց:

#### *Շահաբաժիններից և տոկոսներից եկամուտ*

Շահաբաժիններից եկամուտը ճանաչվում է, երբ սահմանված է վճարը ստանալու բաժնետերերի իրավունքը:

Տոկոսային եկամուտը ճանաչվում է համամասնության հիմունքով՝ մնացորդային արժեքի նկատմամբ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը, որը զեղչում է ակնկալվող ապագա դրամական միջոցների ներհոսքերը ֆինանսական ակտիվի ակնկալվող ժամկետում՝ մինչև ակտիվի զուտ հաշվեկշռային արժեքը:

## 4.12 Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, եկամուտներն ու ծախսերը ֆինանսական հաշվետվություններում ներկայացվում են հաշվանցված, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

## 4.13 Բանկերում մնացորդներ

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ բանկերում մնացորդները կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներն են, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի

չէ: Բանկերում մնացորդներ պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Ընկերությունը դասակարգում է ներդրումները որպես դրամական միջոցների համարժեքներ այն դեպքում, եթե դրանք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և ուրոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

#### 4.14 Ռեպո և հակադարձ ռեպո համաձայնագրեր

Հետգնման պայմանով արժեթղթերի վաճառքի գործառնությունները ("ռեպո") դիտարկվում են որպես ապահովված ֆինանսական գործարքներ: Հետգնման պայմանով վաճառված արժեթղթերը շարունակվում են հաշվառվել ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, և այն դեպքում, երբ գնորդն ունի նշված արժեթղթերի վաճառքի կամ գրավադրման պայմանագրային իրավունք կամ համաձայնություն, դրանք վերադասակարգվում են որպես "Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր" և ներկայացվում են որպես առանձին հաշվեկշիռային հոդված:

Համապատասխան պարտավորությունն արտացոլվում է ֆինանսական կազմակերպությունների կամ հաճախորդների նկատմամբ հաշիվներում:

Հետվաճառքի պայմանով գնված արժեթղթերը ("հակադարձ ռեպո") չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, իսկ տրամադրված գումարները հաշվառվում են որպես պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ կամ հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ:

Արժեթղթերի գնման և վաճառքից առաջացած եկամուտը կամ ծախսը իրենից ներկայացնում է տոկոսային եկամուտ կամ ծախս, որոնք հաշվեգրվում են հետգնման պայմանագրերի գործողության ժամկետների ընթացքում՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե հակադարձ ռեպո պայմանագրով գնված ակտիվները վաճառվեն երրորդ կողմին, արժեթղթերի վերադարձի պարտավորությունը գրանցվում է որպես առևտրային պարտավորություն և չափվում է իրական արժեքով:

## 5 Հիմնական միջոցներ

	Հող, շենքեր և շինություններ	Համակարգչային տեխնիկա	Մեքենա և սարքավորումներ	Փոխադրամիջոցներ	Կապիտալ ներդրումներ վարձակալված հիմնական միջոցներում	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	Ընդամենը	
						Գրասենյակային տարածքներ		
	Այլ							
<i>Սկզբնական արժեք</i>								
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	94,213	633,302	706,926	23,112	10,998	71,452	-	1,540,003
Ավելացում	-	87,005	60,832	-	-	3,307	-	151,144
Օտարում	-	(58,398)	(101,595)	-	-	(4,340)	-	(164,333)
Վերադասակարգում	-	(64,719)	64,719	-	-	-	-	-
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	94,213	597,190	730,882	23,112	10,998	70,419	-	1,526,814
ՖՀՄՍ 16-ի անցման հետևանքով ճշգրտում	-	-	-	-	-	-	373,732	373,732
Ավելացում	-	109,344	190,756	6,512	-	1,583	-	308,195

	Հող, շենքեր և շինու- թյուններ	Համա- կարգչային տեխնիկա	Մեքենա և սարքա- վորումներ	Փոխադրա- միջոցներ	Կապիտալ ներդրումներ վարձակա- ված հիմնա- կան միջոց- ներում	Այլ	Օգտագործ- ման իրավունքի ձևով ակտիվներ	Ընդամենը
							Գրանցյա- կային տարածք- ներ	
Օտարում	-	(11,811)	(44,241)	(10,032)	-	(1,084)	-	(67,168)
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	94,213	694,723	877,397	19,592	10,998	70,918	373,732	2,141,573
<i>Կուրակված մաշվածություն</i>								
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	37,748	196,083	369,250	15,253	3,032	41,916	-	663,282
Տարվա հաշվարկ	1,839	80,258	84,836	1,311	1,111	6,096	-	175,451
Օտարման հետևանքով դուրսգրում	-	(58,143)	(90,217)	-	-	(2,842)	-	(151,202)
Վերադասակարգում	-	(4,746)	4,746	-	-	-	-	-
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	39,587	213,452	368,615	16,564	4,143	45,170	-	687,531
Տարվա հաշվարկ	1,839	85,609	118,654	1,904	1,111	5,780	70,789	285,686
Օտարման հետևանքով դուրսգրում	-	(11,810)	(41,406)	(10,032)	-	(1,003)	-	(64,251)
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	41,426	287,251	445,863	8,436	5,254	49,947	70,789	908,966
<i>Հաշվեկշիռային արժեք</i>								
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	54,626	383,738	362,267	6,548	6,855	25,249	-	839,283
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	52,787	407,472	431,534	11,156	5,744	20,971	302,943	1,232,607

Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը գրավադրված հիմնական միջոցներ չունի:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների ցանկում առկա են 201,542 հազար դրամ սկզբնական արժեքով ամբողջությամբ մաշված հիմնական միջոցներ (2018թ.՝ 183,981 հազար դրամ):

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ժամանակավորապես չշահագործվող հիմնական միջոցների հաշվեկշիռային արժեքը կազմում է 126 հազար դրամ (2018թ.՝ 28 հազար դրամ):

Մաշվածության գծով ծախսը բաշխվել է հետևյալ կերպ.

	2019թ.	2018թ.
Հազար դրամ		
Վաճառքի ինքնարժեք	270,207	170,636
Վարչական ծախսեր	15,479	4,815
	285,686	175,451

## 6 Ոչ նյութական ակտիվներ



Հազար դրամ

	Համակարգ- չային ծրագրեր	Լիցեն- զիաներ և ապրանքա- նիշեր	Ընդամենը
<i>Սկզբնական արժեք</i>			
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	681,992	457,930	1,139,922
Ավելացում	50,490	508	50,998
Օտարում	(15,547)	(292)	(15,839)
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	716,935	458,146	1,175,081
Ավելացում	57,718	20,716	78,434
Օտարում	(27,464)	(542)	(28,006)
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	747,189	478,320	1,225,509
<i>Կուրսակված ամորտիզացիա</i>			
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	332,829	222,614	555,443
Տարվա հաշվարկ	64,764	32,459	97,223
Օտարման հետևանքով դուրսգրում	(15,177)	(42)	(15,219)
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	382,416	255,031	637,447
Տարվա հաշվարկ	65,771	29,089	94,860
Օտարման հետևանքով դուրսգրում	(26,311)	(117)	(26,428)
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	421,876	284,003	705,879
<i>Հաշվեկշռային արժեք</i>			
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	334,519	203,115	537,634
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	325,313	194,317	519,630

Ամորտիզացիայի ծախսը բաշխվել է հետևյալ կերպ.

Հազար դրամ	2019թ.	2018թ.
Վաճառքի ինքնարժեք	94,802	97,165
Վարչական ծախսեր	58	58
	94,860	97,223

## 7 Ներդրումային արժեթղթեր

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2019թ.	31 դեկտեմբերի 2018թ.
---------------	-------------------------	-------------------------

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2019թ.	31 դեկտեմբերի 2018թ.
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր (բաժնային գործիքներ)	219,577	139,901
Ընդամենը ներդրումային արժեթղթեր	219,577	139,901

Բաժնային գործիքները բաղկացած են Ընկերությանը պատկանող MasterCard Incorporated ընկերության 15,330 հատ բաժնետոմսերից:

## 8 Հետաձգված հարկեր

Հետաձգված հարկերի շարժը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2019թ.	2018թ.
Տարեսկզբի մնացորդ	(18,134)	(12,959)
Շահույթում կամ վնասում ճանաչված փոխհատուցում (տե՛ս ծանոթագրություն 21)	3,221	340
Կրեդիտագրված այլ համապարփակ ֆինանսական արդյունքին	(11,900)	(5,515)
Տարեվերջի մնացորդ	(26,813)	(18,134)

2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	1 հունվարի 2019թ.	Այլ համա- պարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2019թ.
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	-	-	(54,530)	(54,530)
Ներդրումային արժեթղթեր	(24,416)	(11,900)	-	(36,316)
Վարձակալության գծով պարտավորություններ	-	-	57,352	57,352

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	6,282	-	399	6,681
Զուտ արդյունք - հետաձգված հարկային պարտավորություններ	(18,134)	(11,900)	3,221	(26,813)

2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ

	1 հունվարի 2018թ.	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2018թ.
Այլ ֆինանսական ակտիվներ	(18,901)	(5,515)	-	(24,416)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	5,942	-	340	6,282
Զուտ արդյունք - հետաձգված հարկային պարտավորություններ	(12,959)	(5,515)	340	(18,134)

Հետաձգված հարկային ակտիվները ենթակա են փոխհատուցման 12 ամսվա ընթացքում:

Այլ համապարփակ եկամուտում ճանաչված գումարները վերաբերում են վաճառքի համար մատչելի ներդրումների իրական արժեքի ճշգրտմանը:

## 9 Պաշարներ

Հազար դրամ

	31 դեկտեմբերի 2019թ.	31 դեկտեմբերի 2018թ.
Հումք	5,808	7,977
Ընդամենը պաշարներ	5,808	7,977

Տարվա ընթացքում ծախս ճանաչված պաշարների գումարը կազմում է 57,156 հազար դրամ (2018թ.՝ 41,170 հազար դրամ):

Ակնկալվում է, որ պաշարները կփոխհատուցվեն ավելի քան տասներկու ամսվա ընթացքում: Պաշարները գրավադրված չեն:

## 10 Հետաձգված ծախսեր

Հետաձգված ծախսեր հողվածով հաշվառվում են վճարահաշվարկային գործունեության հետ կապված ծրագրային սպասարկման և այլ ծախսերի գծով տրված կանխավճարները, որոնք չեն վերաբերում հաշվետու ժամանակաշրջանին և որոնց ժամկետը, հիմնականում, չի գերազանցում մեկ տարին: Ծախսագրումը կատարվում է համապատասխան ժամանակաշրջանում:

## 11 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ

	31 դեկտեմբերի	31 դեկտեմբերի
--	---------------	---------------

	2019թ.	2018թ.
<i>Ֆինանսական ակտիվներ</i>		
Առևտրային դեբիտորական պարտքեր	106,280	77,989
	106,280	77,989
<i>Ոչ ֆինանսական ակտիվներ</i>		
Պետական բյուջեից դեբիտորական պարտքեր	459	415
Տրված կանխավճարներ	203,291	88,543
Այլ դեբիտորական պարտքեր	805	5,237
	204,555	94,195
Ընդամենը առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	310,835	172,184

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Առևտրային դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

Կանխավճարները ներառում են 194,005 հազար դրամ կանխավճարային գումար՝ 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերման համար (2018թ.՝ ոչինչ):

Ծառայությունների մատուցումից առաջացած առևտրային դեբիտորական պարտքի միջին տևողությունը կազմում է 18 օր (2018թ.՝ 17 օր): Առևտրային դեբիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Ընկերությունը լրիվ պահուստավորում է բոլոր այն առևտրային դեբիտորական պարտքերը, որոնց մարման ժամկետից անցել է ավելի քան 90 օր, քանի որ, հիմնվելով անցյալի փորձի վրա, մարման ժամկետը 90 օրով գերազանցելու դեպքում առևտրային դեբիտորական պարտքերը համարվում են անհավաքագրելի: Ելնելով անցյալի փորձից՝ առևտրային դեբիտորական պարտքերը պահուստավորվում են՝ հիմնվելով ծառայությունների մատուցումից առաջացած չվերականգնվող գումարների անհավաքագրելիության գնահատման վրա:

Ղեկավարությունը հավատացած է, որ պետական բյուջեից դեբիտորական պարտքերն ամբողջովին ենթակա են վերականգնման:

Առևտրային դեբիտորական պարտքի հավաքագրելիությունը որոշելիս հաշվի է առնվում դեբիտորի պարտքի մարման ժամանակացույցի ցանկացած փոփոխություն՝ սկսած պարտքի առաջացման պահից մինչև հաշվետու ամսաթիվը: Հավաքագրելիության ռիսկի կենտրոնացումը սահմանափակ է՝ ելնելով հաճախորդների շրջանակների մեծությունից և միևյանց կապակցված չլինելու հանգամանքից: Հետևաբար, ղեկավարությունը հավատացած է, որ 2019 և 2018թթ. դեկտեմբերի 31- դրությամբ չկան կասկածելի դեբիտորական պարտքեր:

## 12 Մնացորդներ բանկերում

Հազար դրամ	31 դեկտեմբերի 2019թ.	31 դեկտեմբերի 2018թ.
Դրամական միջոցներ ՀՀ ԿԲ-ում	279,532	330,327
Դրամական միջոցներ առևտրային բանկերում	54,423	5,637
Ընդամենը մնացորդներ բանկերում	333,955	335,964

Բանկերում մնացորդների գծով ակնկալվող պարտքային կորուստները մոտ են զրոյական արժեքի, այդ իսկ պատճառով չեն բացահայտվում այս աղյուսակում:

Տե՛ս ծանոթագրություն 24՝ բանկերում մնացորդների արժույթների բացահայտման համար:

## 13 Կապիտալ և պահուստներ

### 13.1 Բաժնետիրական կապիտալ

Բաժնետոմսերի քանակը, եթե այլ բան նշված չէ

	<b>Սովորական բաժնետոմսեր</b>	<b>Սովորական բաժնետոմսեր</b>
	<b>2019թ.</b>	<b>2018թ.</b>
Հայտարարված և ամբողջությամբ վճարված բաժնետոմսեր 80 սովորական բաժնետոմսեր, յուրաքանչյուրը՝ 12,143.1 հազ. դրամ	971,448	971,448
Ընդամենը բաժնետիրական կապիտալ հազար դրամներով	971,448	971,448

Ընկերությունն ունի սովորական բաժնետոմսերի մեկ դաս, որը հաստատուն եկամտի նկատմամբ իրավունք չունի:

N	Բաժնետերեր	<b>Բաժնետոմ- սերի քանակ</b>	<b>Տոկոս</b>
1	ՀՀ կենտրոնական բանկ	45	56.25
2	«Ակբա-Կրոդիտ Ազրիկոլ Բանկ» ԲԲԸ	5	6.25
3	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ	5	6.25
4	«Արարատբանկ» ԲԲԸ	5	6.25
5	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	4	5
6	«Արդշինբանկ» ՓԲԸ	4	5
7	«Ամերիաբանկ» ՓԲԸ	3	3.75
8	«Արցախբանկ» ՓԲԸ	1	1.25
9	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ	1	1.25
10	«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ	1	1.25
11	«Ինեկոբանկ» ՓԲԸ	1	1.25
12	«Յունիբանկ» ԲԲԸ	1	1.25
13	«ԱյՂի Բանկ» ՓԲԸ	1	1.25
14	«Էվոկաբանկ» ՓԲԸ	1	1.25
15	«Բիրլուս բանկ Արմենիա» ՓԲԸ	1	1.25
16	«Արմսվիսբանկ» ՓԲԸ	1	1.25
		80	100

### 13.2 Շահաբաժիններ

2019թ. սովորական բաժնետոմս ունեցող բաժնետերերին շահաբաժին չի վճարվել (2018թ.՝ նույնպես):

### 13.3 Պահուստային կապիտալ

Ընկերությունն ստեղծում է պահուստային հիմնադրամներ: Ընկերության պահուստային հիմնադրամը համալրվում է բաժնետիրական կապիտալի 15 տոկոսից ոչ պակաս հաշվետու ժամանակաշրջանի շահույթի բաշխման միջոցով, ինչը կարգավորվում է Ըկերության կանոնադրությամբ: Պահուստային հիմնադրամի միջոցներն օգտագործվում են օրենքով սահմանված կարգով և նպատակներով:

### 13.4 Իրական արժեքի պահուստ

Վերագնահատման պահուստն առաջանում է իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող արժեթղթերի իրական արժեքի փոփոխությունից առաջացած օգուտից և վնասից, որը վերագրվում է սեփական կապիտալին մինչև ֆինանսական գործիքի օտարումը, որի դեպքում կապիտալի վերագնահատման պահուստում մնացորդը տեղափոխվում է շահույթ կամ վնաս:

## 14 Վարձակալություն

Վարձակալական պարտավորությունները ներկայացված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հետևյալ կերպ.

Հազար դրամ	31 դեկտեմբերի 2019թ.	31 դեկտեմբերի 2018թ.
Ընթացիկ	61,579	-
Ոչ ընթացիկ	257,043	-
	<u>318,622</u>	<u>-</u>

Ընկերությունը վարձակալել է գրասենյակային տարածքներ: Բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների՝ յուրաքանչյուր վարձակալություն արտացոլվել է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն:

Ընկերության վարձակալությունները չեն պարունակում վարձակալության փոփոխուն վճարումներ: Ընկերությունը դասակարգում է իր՝ օգտագործման իրավունքի ձևով ակտիվները սեփական հիմնական միջոցների դասակարգմանը համահունչ (տե՛ս ծանոթագրություն 5-ը):

Ընդհանուր առմամբ յուրաքանչյուր վարձակալություն պարունակում է սահմանափակում, ըստ որի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը կարող է օգտագործել միայն Ընկերությունը, քանի դեռ առկա չէ ակտիվը այլ կողմի տրամադրելու պայմանագրային իրավունք:

Վարձակալությունները կամ չեղյալ չհայտարարվող են, կամ կարող են չեղյալ հայտարարվել՝ միայն առաջացնելով նշանակալի դադարեցման վճար: Ընկերությանը արգելված է հիմքում ընկած ակտիվը վաճառել կամ գրավադրել: Վարձակալված գրասենյակային տարածքները Ընկերությունը պետք է պահպանի բարեկարգ վիճակում (վերանորոգված) և վարձակալության վերջում գույքը վերադարձնի իր սկզբնական վիճակով: Վարձակալական պայմանագրերի համաձայն Ընկերությունը պետք է ապահովագրի հիմնական միջոցի տարրերը և կատարի պահպանման ծախսեր այդ տարրերի մասով:

Ստորև աղյուսակում նկարագրված են Ընկերության վարձակալական գործառույթները ըստ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված օգտագործման իրավունքի ձևով ակտիվների տիպերի.

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ (ՕԻՁԱ)	Վարձա- կալված ՕԻՁԱ- ների քանակ	Մնացոր- դային ժամկետ	Միջին մնացոր- դային վարձա- կալական	Երկա- րացման հնարա- վորությամբ վարձակա-	Ձեռք- բերման հնարա- վորությամբ վարձակա-	Գործակցին կապված փոփոխուն վճարով վարձակա-	Դադա- րեցման հնարա- վորությամբ վարձակա-
---	--	----------------------------	--	---	---	---	---

			Ժամկետ	լուծյունների քանակ	լուծյունների քանակ	լուծյունների քանակ	լուծյունների քանակ
Գրասենյակային տարածքներ	4	4-8 տարի	5	1	-	-	-

Վարձակալության գծով պարտավորությունները ապահովագրված են համապատասխան հիմքում ընկած ակտիվներով: Ապագա նվազագույն վարձավճարները 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արտացոլված են ստորև.

Հազար դրամ

	Նվազագույն վարձավճարներ	
	31 դեկտեմբերի 2019թ.	31 դեկտեմբերի 2018թ.
Մեկ տարվա ընթացքում		
Վարձավճարներ	61,579	-
Ֆինանսական ծախս	32,297	-
	93,876	-
Երկրորդից հինգերորդ տարիների ընթացքում		
Վարձավճարներ	254,786	-
Ֆինանսական ծախս	50,977	-
	305,763	-
Հինգ տարվանից հետո		
Վարձավճարներ	2,257	-
Ֆինանսական ծախս	407	-
	2,664	-
Ընդամենը համախառն վարձավճարներ	402,303	-

*Վարձակալության գծով վճարներ, որոնք չեն ճանաչվում որպես պարտավորություն*

Ընկերությունն ընտրել է կարճաժամկետ վարձակալությունների (12 ամիս կամ ավելի պակաս ակնկալվող ժամկետով) և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների հաշվառման համար չճանաչել վարձակալության գծով պարտավորություն: Նման վարձակալությունների համար կատարված վճարները ծախսագրվում են գծային հիմունքով: Ի լրումն, թույլատրելի չէ որոշակի փոփոխուն վարձավճարներ ճանաչել որպես վարձակալության գծով պարտավորություն, դրանք ծախսագրվում են իրականացման պահին:

Վարձակալության գծով պարտավորությունը չափելիս չներառած վճարներին վերաբերող ծախսերը ներկայացված են ստորև.

Հազար դրամ

	31 դեկտեմբերի 2019թ.
Կարճաժամկետ վարձակալություններ	3,150
	3,150

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն բացահայտված է 4.5 ծանոթագրություններում:

## 15 Ակտիվներին վերաբերող շնորհներ

Հազար դրամ	31 դեկտեմբերի 2019թ.	31 դեկտեմբերի 2018թ.
Տարեսկզբի մնացորդ	10,414	10,973
Ճանաչված որպես այլ եկամուտ	(556)	(559)
Տարեվերջի մնացորդ	9,858	10,414

## 16 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	31 դեկտեմբերի 2019թ.	31 դեկտեմբերի 2018թ.
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>		
Առևտրային կրեդիտորական պարտքեր	46,354	21,187
Արձակուրդային վճարների գծով պարտավորություններ	37,117	31,411
	83,471	52,598
<i>Ոչ ֆինանսական պարտավորություններ</i>		
Հաճախորդներից կանխավճարներ	9,500	17,000
Վճարվելիք հարկեր և պարտավորություններ	29,251	27,356
	38,751	44,356
	122,222	96,954

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կանխավճարները ներառում են «ԱրՔա» վճարային համակարգի անդամ բանկերի կողմից վճարված անդամակցության և տարեկան անդամավճարները:

Առևտրային կրեդիտորական պարտքերը ներառում են 15,552 հազար դրամ վճարման ենթակա գումար՝ հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերման համար՝ 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (2018թ.՝ ոչինչ)

Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Ընկերությունն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություններ, որոնք ապահովում են բոլոր պարտավորությունների ժամանակին կատարում:

## 17 Հասույթ

Հազար դրամ	2019թ.	2018թ.
Բանկոմատների և POS տերմինալների կանխիկացումից հասույթ	715,884	596,821
Բանկոմատների և POS տերմինալների սպասարկումից հասույթ	195,736	162,144
Քարտերի էմբոսինգից և կողավորումից հասույթ	93,336	75,314
Տարեկան անդամավճարներից հասույթ	-	39,500
Տվյալների բազայի և սպասարկման կետերի վարումից հասույթ	120,397	135,562
Միջազգային գործարքների իրականացումից և միջազգային	395,731	349,808



քարտերի բազայի վարումից հասույթ		
SMS հաղորդագրությունների ուղարկումից հասույթ	248,082	155,505
Այլ	66,546	54,855
	<u>1,835,712</u>	<u>1,569,509</u>

## 18 Վաճառքի ինքնարժեք

Հազար դրամ	2019թ.	2018թ.
Հատուցումներ աշխատակիցներին	590,723	540,193
Մաշվածություն և անորտիզացիա	365,009	267,801
Վճարահաշվակային համակարգի ծրագրային սպասարկման ծախսեր	161,511	150,660
Նյութական ծախսեր	54,885	39,306
Խորհրդատվական ծախսեր	7,200	18,539
Հաղորդակցության գծով ծախսեր	209,513	131,296
Կոմունալ ծախսեր	10,799	11,875
Գործառնական վարձակալության գծով ծախսեր	3,150	80,514
Հիմնական միջոցների նորոգման և սպասարկման ծախսեր	28,836	31,785
Գործուղման ծախսեր	14,412	13,701
Վերապատրաստման ծախսեր	8,048	5,964
Այլ	5,663	6,855
	<u>1,459,749</u>	<u>1,298,489</u>

## 19 Վարչական ծախսեր

Հազար դրամ	2019թ.	2018թ.
Հատուցումներ աշխատակիցներին	117,701	132,719
Մաշվածություն և անորտիզացիա	15,537	4,873
Գործառնական վարձակալության գծով ծախսեր	-	17,428
Խորհրդատվական ծախսեր	7,520	7,240
Հարկեր (բացառությամբ շահութահարկի) և տուրքեր	4,121	3,327
Այլ	14,312	12,186
	<u>159,191</u>	<u>177,773</u>

## 20 Ֆինանսական եկամուտ և ծախսեր

Հազար դրամ	2019թ.	2018թ.
Տոկոսային եկամուտ կազմակերպությունների հետ ռեպո գործարքներից	10,906	11,517
Շահաբաժնից եկամուտ	9,737	7,433
Ընդհանուր ֆինանսական եկամուտ	<u>20,643</u>	<u>18,950</u>

Լիզինգային պայմանագրերի գծով տոկոսային ծախսեր	(38,738)	-
Ընդհանուր ֆինանսական ծախսեր	(38,738)	-
Զուտ ֆինանսական եկամուտ/(ծախսեր)	(18,095)	18,950

## 21 Շահութահարկի գծով ծախս

Հազար դրամ	2019թ.	2018թ.
Ընթացիկ հարկ	49,406	28,972
Հետաձգված հարկ (տե՛ս ծանոթագրություն 8)	(3,221)	(340)
	46,185	28,632

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
	2019թ.	2018թ.
Շահույթ մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ-ների)	197,288	103,783
Շահութահարկ՝ 20% դրույքաչափով (2018թ.՝ 20%)	39,458	20,757
Զուտ չնվազեցվող ծախսեր	6,099	7,875
Հարկային դրույքաչափի նվազեցում	628	-
Շահութահարկի գծով ծախս	46,185	28,632

### Հարկային դրույքաչափերի փոփոխություններ և ապագա հարկային վճարների վրա ազդող գործոններ

2019թ. Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխությունների արդյունքում եկամտահարկի դրույքաչափի իջեցումը 20%-ից մինչև 18%-ի նախատեսվում է, որ ուժի մեջ կմտնի 2020թ. հունվարի 1-ից սկսված ժամանակահատվածների համար: Հետևաբար, 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հետաձգված հարկային մնացորդները ճանաչվել են 18%-ով (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 20%): Այս փոփոխությունը հանգեցրել է 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարվա ընթացքում Ընկերության շահույթում կամ վնասում ճանաչված հետաձգված հարկային ակտիվների վերաչափման հետ կապված 628 հազար դրամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված հետաձգված հարկային պարտավորությունների վերաչափման հետ կապված 2,442 հազար դրամ օգուտի:

## 22 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա անկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

### 22.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Ընկերությունն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

#### *Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներ*

Ղեկավարությունը կատարել է հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետների գնահատում: Ղեկավարության համոզմամբ գնահատված հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներն էականորեն չեն տարբերվում այդ ակտիվների տնտեսական կյանքից: Եթե հիմնական միջոցների փաստացի օգտակար ծառայության ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա ֆինանսական հաշվետվությունները կարող են էականորեն տարբերվել:

#### *Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում*

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը գնահատում է, թե արդյոք գոյություն ունեն ակտիվների արժեզրկման ցուցանիշներ: Եթե կան նման ցուցանիշներ, Ընկերությունը հաշվարկում է այդ ակտիվների փոխհատուցվող գումարը: Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկման որոշման ժամանակ ղեկավարությունը կատարել է որոշ գնահատումներ, որոնք ներառում են, մասնավորապես, արժեզրկման պատճառը, ժամանակը և գումարը: Արժեզրկումը կախված է մի շարք գործոններից, մասնավորապես, տեխնոլոգիական փոփոխություններից (որոնք կարող են ազդել ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքների վրա), ծառայության մատուցման դադարեցումից (որը կարող է հանգեցնել լիցենզիայի դադարեցմանը և հետևաբար համապատասխան ոչ նյութական ակտիվի արժեզրկմանը):

#### *Վարձակալության երկարաձգման հնարավորություններ*

Երբ Բանկն ունի վարձակալության երկարաձգման հնարավորություն, ղեկավարությունը օգտագործում է իր դատողությունը՝ որոշելու այդ հնարավորության ողջամտորեն կիրառումը: Ղեկավարությունը հաշվի է առնում բոլոր փաստերն ու հանգամանքները՝ ներառյալ իրենց նախկին փորձը և ակտիվը փոխելու դեպքում առաջացած ցանկացած ծախս, եթե երկարաձգման հնարավորությունը չի կիրառվում վարձակալության ժամկետը որոշելու համար: 13,394 հազ. ՀՀ դրամի վարձակալության հնարավոր վճարները չեն ներառվել վարձակալության գծով պարտավորություններում, քանի որ ողջամտորեն հիմնավորված չէ երկարաձգման հնարավորության կիրառումը:

#### *Վերաձգված հարկային ակտիվների ճանաչումը*

Այն չափը, որով կարող է ճանաչվել հետաձգված հարկային ակտիվ, կախված է այն հավանականության գնահատումից, թե արդյո՞ք ապագայում հասանելի կլինի եկամուտ, որի դիմաց կիրացվեն նվազեցման ենթակա ժամանակավոր տարբերությունները և նախորդ ժամանակաշրջաններից բերված հարկային վնասը: Ի լրումն, անհրաժեշտ է էական

դատողություն հարկային միջավայրում իրավական և տնտեսական սահմանափակումների և անորոշությունների գնահատման ժամանակ:

## 23 Ֆինանսական գործիքներ

### 23.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի, ֆինանսական պարտավորության և բաժնային գործիքի յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 4.7-ում:

### 23.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև.

#### Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	31 դեկտեմբերի 2019թ.	31 դեկտեմբերի 2018թ.
<i>Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ</i>		
Ներդրումային արժեթղթեր	219,577	139,901
<i>Անորոշագցված արժեք</i>		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	106,280	77,989
Մնացորդներ բանկերում	333,955	335,964
	<u>659,812</u>	<u>553,854</u>

#### Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	31 դեկտեմբերի 2019թ.	31 դեկտեմբերի 2018թ.
<i>Անորոշագցված արժեքով պահվող ֆինանսական պարտավորություններ</i>		
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	83,471	52,598
Վարձակալության գծով պարտավորություններ	318,622	-
	<u>402,093</u>	<u>52,598</u>

## 24 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Ընկերությունը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Ընկերությունը ներգրավված չէ սպեկուլյատիվ նպատակներով ֆինանսական ակտիվների ակտիվ առքովաճառքի գործարքներում, ինչպես նաև չի թողարկում օպցիոններ: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Ընկերությունը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

## Ֆինանսական ռիսկի գործոններ

### ա) Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Ընկերությունը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժույթային ռիսկի, որը բխում է ինչպես գործառնական, այնպես էլ ներդրումային գործունեությունից:

### Արտարժույթային ռիսկ

Ընկերությունը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվները, որոնք Ընկերությանը ենթարկվում են արտարժույթային ռիսկի, նկարագրված են ստորև: Արտարժույթով արտահայտված ֆինանսական պարտավորություններ Ընկերությանը չունի:

#### Հազար դրամ

#### 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	ԱՄՆ դոլար	Եվրո
<i>Ֆինանսական ակտիվներ</i>		
Մնացորդներ բանկերում	1,483	915
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	1,483	915

#### Հազար դրամ

#### 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	ԱՄՆ դոլար	Եվրո
<i>Ֆինանսական ակտիվներ</i>		
Մնացորդներ բանկերում	1,434	3,132
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	1,434	3,132

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Ընկերության զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ դրամի 10% (2018թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը (2018թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2018թ.՝ 10%):

Դրամի արժևորումը ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ 10%-ով (2018թ.՝ 10%) կունենա հետևյալ ազդեցությունը:

	ԱՄՆ դոլարի ազդեցություն		Եվրոյի ազդեցություն	
	2019թ.	2018թ.	2019թ.	2018թ.
Շահույթ կամ վնաս	148	143	92	313
Սեփական կապիտալ	148	143	92	313

Արտարժույթի փոխարժեքի տատանման ազդեցությունը տարվա ընթացքում փոփոխվում է՝ կախված արտերկրյա գործարքների ծավալից: Այդուհանդերձ, վերը ներկայացված վերլուծությունը կարելի է համարել Ընկերության՝ արտարժույթային ռիսկին ենթարկվածության արտացոլումը:

*բ) Տոկոսադրույքային ռիսկ*

Ընկերությունը տոկոսադրույքի ռիսկի չի ենթարկվում, քանի որ տոկոսակիր փոխառու միջոցներ չունի:

*գ) Պարտքային ռիսկ*

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Ընկերությունը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Այս ռիսկի ազդեցությունը Ընկերության համար առաջանում է տարբեր ֆինանսական գործիքներից, ինչպիսիք են դեբիտորական պարտքերը, ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջները և վաճառքի համար մատչելի ներդրումները: Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը ներկայացված է հետևյալ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներով՝

Հազար դրամ	31 դեկտեմբերի 2019թ.	31 դեկտեմբերի 2018թ.
Ֆինանսական ակտիվներ՝ հաշվեկշռային արժեքներ		
Ներդրումային արժեթղթեր	219,577	139,901
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	106,280	77,989
Մնացորդներ բանկերում	333,955	335,964
	<u>659,812</u>	<u>553,854</u>

Ղեկավարության համոզմամբ բաժնետոմսերի և ֆինանսական հաստատություններից ստացման ենթակա գումարների գծով պարտքային ռիսկ չկա:

Հաշվետու ամսաթվի դրությամբ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի գծով նշանակալի պարտքային ռիսկի կենտրոնացում առկա չէ: 2019թ. դեկտեմբերի 31-ի և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը ժամկետանց դեբիտորական պարտքեր չի ունեցել, հետևաբար դրանց գծով չի ստեղծել պահուստ:

*գ) Իրացվելիության ռիսկ*

Իրացվելիության ռիսկը այն ռիսկն է, որ Ընկերությունն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Ընկերությունը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Բոլոր ֆինանսական պարտավորություններն ունեն մինչև 1 ամիս մարման ժամկետ: 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարձակալության գծով չզեղչված պարտավորությունների ժամկետային վերլուծությունը արտացոլված է ծանոթագրություն 14-ում:

## 25 Իրական արժեքի չափում

Ընկերությունը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ակտիվները և պարտավորությունները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),

2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),

3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

## 25.1 Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չեն չափվել իրենց իրական արժեքով և ըստ մակարդակի վերլուծում է դրանք իրական արժեքի հիերարխիայում, թե իրական արժեքի չափումը որ դասում է դասակարգված:

Հազար դրամ

	<b>31 դեկտեմբերի 2019թ.</b>				
	<b>Մակարդակ 1</b>	<b>Մակարդակ 2</b>	<b>Մակարդակ 3</b>	<b>Ընդամենը իրական արժեք</b>	<b>Ընդամենը հաշվեկշռային արժեք</b>
<i>Ֆինանսական ակտիվներ</i>					
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	-	106,280	-	106,280	106,280
Մնացորդներ բանկերում	-	333,955	-	333,955	333,955

*Ֆինանսական*

*պարտավորություններ*

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

- 83,471 - 83,471 83,471

Վարձակալության գծով պարտավորություններ

- 318,622 - 318,622 318,622

Հազար դրամ

	<b>31 դեկտեմբերի 2018թ.</b>				
	<b>Մակարդակ 1</b>	<b>Մակարդակ 2</b>	<b>Մակարդակ 3</b>	<b>Ընդամենը իրական արժեք</b>	<b>Ընդամենը հաշվեկշռային արժեք</b>
<i>Ֆինանսական ակտիվներ</i>					
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	-	77,989	-	77,989	77,989
Մնացորդներ բանկերում	-	335,964	-	335,964	335,964

*Ֆինանսական*

*պարտավորություններ*

Առևտրային և այլ

կրեդիտորական պարտքեր

- 52,598 - 52,598 52,598

### Առևտրային և այլ դեբիտորական և կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ դեբիտորական և կրեդիտորական պարտքերի իրական արժեքը գնահատվում է օգտագործելով գեղջված դրամական հոսքերի մեթոդը, կիրառելով նմանատիպ մարման ժամկետ ունեցող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համար առաջարկվող

դրույքաչափերը: Ցպահանջ վճարվելիք և ստացվելիք գումարների իրական արժեքը հաշվետու ամսաթվին վճարվելիք գումարն է:

*Մնացորդներ բանկերում*

Բանկերում մնացորդները հաշվառվում են ամորտիզացված արժեքով: Բանկերում մնացորդների հաշվեկշռային արժեքը մոտ է դրանց իրական արժեքին:

**25.2 Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ**

Հազար դրամ	31 դեկտեմբերի 2019թ.				
	Մակար- դակ 1	Մակար- դակ 2	Մակար- դակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռա- յին արժեք
Ֆինանսական ակտիվներ Ցուցակված բաժնային ներդրումներ	219,577	-	-	219,577	219,577

Հազար դրամ	31 դեկտեմբերի 2018թ.				
	Մակար- դակ 1	Մակար- դակ 2	Մակար- դակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռա- յին արժեք
Ֆինանսական ակտիվներ Ցուցակված բաժնային ներդրումներ	139,901	-	-	139,901	139,901

Իրական արժեքի չափման մեթոդները և գնահատման մեխանիզմը չեն փոփոխվել նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համեմատությամբ:

*Ցուցակված բաժնային ներդրումներ*

Ցուցակված սեփական կապիտալի ներդրումները իրենցից ներկայացնում են Master Card Incorporated ընկերության բաժնետոմսերում ներդրումները:

**26 Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվանցում**

Իր գործունեության ընթացքում Ընկերությունը իրականացնում է տարբեր գործառնություններ, որոնք կարող են ներկայացվել զուտ արժեքով, եթե գոյություն ունի իրավաբանորեն ամրագրված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվներն ու ֆինանսական պարտավորությունները, որոնք հաշվանցված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ, կամ ենթակա են կատարման համաձայն հաշվանցման գլխավոր համաձայնագրի կամ համանման պայմանագրերի, որը ներառում է նմանատիպ ֆինանսական գործիքները, անկախ այն բանից, դրանք հաշվանցվել են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ, թե ոչ:

Հազար դրամ

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ



	Համախառն ակտիվներ	Համախառն պարտավո- րություններ, հաշվանցում	Ներկայաց- ված զուտ արժեքներ	Ֆինանսական գործիքներ չճանաչված	Ստացված դրամակա ն միջոց	Զուտ
				Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում		
Ֆինանսական ակտիվներ						
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	3,174,300	3,174,300	-	-	-	-

Հազար դրամ

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Համախառն ակտիվներ	Համախառն պարտավո- րություններ, հաշվանցում	Ներկայաց- ված զուտ արժեքներ	Ֆինանսական գործիքներ չճանաչված	Ստացված դրամակա ն միջոց	Զուտ
				Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում		
Ֆինանսական ակտիվներ						
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	1,712,818	1,712,818	-	-	-	-

*Ապահովագրական դեպոզիտ*

MasterCard ընկերության ստացիատիվ բանկերը պայմանագրով սահմանված կարգով վճարել են ապահովագրական դեպոզիտ, որպես ապահովման միջոց՝ իրենց կողմից թողարկված քարտերով MasterCard վճարային համակարգում գործարքներ կատարելու համար: Նշված հավաքագրումը և դրա նկատմամբ գոյացած ֆինանսական եկամտի բաշխումը առևտրային բանկերի միջև կատարվում է Ընկերության կողմից: Ապահովագրական դեպոզիտի վերաբերյալ հաշիվը բացվել է Ընկերության անունով, սակայն դա չի ներառվել Ընկերության ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, քանի որ ապահովագրական դեպոզիտի հետ կապված ռիսկերը և օգուտները, փաստացի, կրում են MasterCard ընկերությունը և առևտրային բանկերը: Ապահովագրական դեպոզիտի գումարը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 871,805 հազար դրամ (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 862,306 հազար դրամ):

*Բանկային (պրոցեսինգային) հաշիվ*

Ընկերության անունով «ԷյՋ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ում բացված հաշվի միջոցով կատարվում է ԱրՔա և MasterCard վճարային համակարգերի քարտերով կատարված գործարքների փոխադարձ վճարումները (մարշրուտիզացիան, պրոցեսինգը): Սակայն հաշվի մնացորդը չի ներառվել Ընկերության ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, քանի որ Ընկերությունը չի կրում դրա հետ կապված ռիսկերը և օգուտները: Հաշվի մնացորդը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 2,302,495 հազար դրամ (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 850,512 հազար դրամ):

*Փոխհարուցվող գումարներ*

Առևտրային բանկերի կողմից Ընկերությանը փոխհատուցվում են գումարներ, որոնք բաղկացած են MasterCard-ի միանվագ և տարեկան վճարներից, ինչպես նաև ծրագրային ապահովման տարեկան վճարներից և այլ ծախսերից: Ընկերությունը պայմանագրի կողմ է նշված վճարումների իրականացման համար: Փաստորեն, Ընկերությունը հանդիսանում է միջնորդ առևտրային բանկերի, MasterCard-ի և այլ կազմակերպության միջև: Ելնելով նշվածից՝ փոխհատուցվող գումարները չեն ներառվել Ընկերության շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Փոխհատուցվող գումարները 2019թ. ընթացքում կազմել են 1,456,292 հազար դրամ (2018թ.՝ 1,176,608 հազար դրամ), որոնք չեն արտացոլվել Ընկերության շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում:

## 27 Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքերի համադրում

Ընկերության պարտավորություններում ֆինանսավորման գործունեությունից առաջացող փոփոխությունները կարող են դասակարգվել հետևյալ կերպ .

Հազար ՀՀ դրամ

2019

	Այլ պարտավորություններ	Ընդամենը
2019թ. հունվարի 1-ի դրությամբ	373,732	373,732
Դրամային հոսքերից		
Վճարումներ	(93,848)	(93,848)
Ոչ դրամային հոսքերից		
Տոկոսների կուտակում	38,738	38,738
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	318,622	318,622

## 28 Պարտավորվածություններ

### 28.1 Ոչ նյութական ակտիվների գծով պարտավորվածություններ

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության պայմանագրային պարտավորությունները ոչ նյութական ակտիվների գծով կազմում է 108,212 հազար դրամ (2018թ.՝ 60,713 հազար դրամ):

## 29 Պայմանականություններ

### 29.1 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Ընկերությունը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Ընկերության գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի

ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

## 29.2 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ մեկնաբանություններ է պահանջում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

## 30 Կապակցված կողմեր

Ընկերության կապակցված կողմերը ներառում են բաժնետերերը, հիմնական ղեկավար անձնակազմը և այլ:

### 30.1 Վերահսկողություն

Ընկերությունը վերահսկվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից, որին պատկանում է Ընկերության բաժնետոմսերի 56.25% և որը հանդիսանում է Ընկերության վերջնական վերահսկողը:

### 30.2 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Ընկերության և իր կապակցված կողմերի միջև իրականացված գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները և տարվա եկամուտները հետևյալն են:

Հազար դրամ

#### Շահույթ կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

	2019թ.	2018թ.
Մայր ընկերություն		
Ծառայությունների մատուցումից հասույթ	1,831,122	1,569,509
Այլ եկամուտ	3,431	10,159
Տոկոսային եկամուտ	10,906	11,517
	<b>1,845,459</b>	<b>1,591,185</b>

Հազար դրամ

#### Մնացորդներ

31 դեկտեմբերի  
2019թ.

31 դեկտեմբերի  
2018թ.

Մայր ընկերություն		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	105,860	77,615
Մնացորդներ բանկերում	333,955	335,964
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	191	275
Ստացված կանխավճարներ	7,500	15,000

### 30.3 Գործարքներ ղեկավարության և նրանց անմիջական ազգականների հետ

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ղեկավարությունը և նրանց անմիջական ազգականները կանոնադրական կապիտալում էական մասնակցություն չունեն:

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը, որը ներառված է «Փոխհատուցումներ աշխատակիցներին» հոդվածում.

Հազար դրամ	<u>2019թ.</u>	<u>2018թ.</u>
Աշխատավարձ և պարգևատրումներ	79,716	97,555